Ամառը Իկարի վրա

հեղինակ՝ Արթուր Քլարկ

թարգմանիչ՝ Ջ. Թորոսյան

Սթափվելով Քոլին Շերարդը երկար ժամանակ չէր կարողանում հասկանալ, թե որտեղ է ինքը: Նա պառկած էր ինչոր կապսուլի մեջ, կլոր մի բլրի գագաթին, որի զառիթափ լանջերը պատած էին մուգմուգ կեղևով, ասես խանձված լինեին թեժ կրակից: Վերևում տարածվում էր կուպրի նման սև երկինքը բազմաթիվ աստղերով, ու նրանցից մեկը, ուղիղ հենց հորիզոնի վրա, հիշեցնում էր մի պստլիկ պայծառ արև:

Արև՞ն է: Մի՞թե նա այդքան հեռու է Երկրից: Չի կարող պատահել: Հիշողությունը հուշում էր, որ Արևը մոտ է, սպառնալիորեն մոտ, նա ոչ մի կերպ չէր կարող դառնալ փոքրիկ աստղ: Հանկարծ նրա գլխում ամեն ինչ պարզվեց: Շերարդը գիտեր որտեղ է ինքը, ստույգ գիտեր, ու այդ միտքը այնքան սարսափելի էր, որ նա հազիվ նորից չկորցրեց գիտակցությունը:

Ոչ մի մարդ այդքան մոտ չէր եղել Արևին:

Վնասված տիեզերաքարշը ընկած էր ոչ թե բլրի, այլ ընդամենը երկու մղոն տրամագիծ ունեցող փոքրիկ տիեզերական մարմնի խիստ ծռմռված մակերևույթի վրա: Եվ արևմուտքում արագորեն դեպի հորիզոնն իջնող վառ աստղը՝ «Պրոմեթևսի» լույսերն են, այն նավի, որը Շերարդին բերել է այստեղ, Երկրից միլիոնավոր մղոններ հեռու: Իհարկե, ընկերներն արդեն տարակուսում են, թե ինչու չվերադարձավ իր տիեզերաքարշը՝ հետ ընկած փոստատար աղավնին: Կանցնի մի փոքր ժամանակ, ու «Պրոմեթևսը» աչքից կկորչի, հորիզոնի ետևը կանցնի, աչքակապուկ խաղալով Արևի հետ. . .

Քոլին Շերարդը տանուլ տվեց այդ խաղը: Ճիշտ է, նա դեռ աստերոիդի գիշերային կողմում է, թաքնված է նրա ցուրտ շվաքում, սակայն արագասահ գիշերը ավարտվելու վրա է: Իկարի չորսժամյա ցերեկը վրա է հասնում սրընթաց և անկանխելի, մոտ է ահարկու արևածագը, երբ Արևի պայծառ լույսը (երեսուն անգամ ավելի պայծառ, քան Երկրի վրա) այս քարերին շաղ կտա իր այրող բոցը: Շերարդը հիանալի գիտեր, թե ինչու շուրջը ամեն ինչ խանձված է սևանալու աստիճան: Թեև Իկարը արևային մերձակետում կլինի միայն մեկ շաբաթ հետո, արդեն այժմ կեսօրյա

ջերմաստիճանը նրա մակերեսին մոտ հազար աստիճանի է հասնում ըստ Ֆարենհայտի:

Կատակելու տրամադրություն չուներ, բայց այնուամենայնիվ նա հիշեց, թե ինչ ասաց նավապետ Մըքլելանը Իկարի մասին. «Այ թե տաք երկիր է, ակամա ուրիշի ձեռքերով շագանակներ պետք է հանեն կրակից»:

Մի քանի օր առաջ նրանք ակնհանդիման համոզվեցին, թե որքան արդարացի է այդ կատակը. օգնեց այն պարզագույն ոչ գիտական փորձերից մեկը, որոնք երևակայության վրա շատ ավելի ուժեղ են ազդում, քան տասնյակ գրաֆիկներ ու կորագծեր:

Արևածագից ոչ շատ առաջ տիեզերանավերից մեկը բլրակի գլխին դրեց փայտի մի կտոր: Գիշերային կողմում պահված՝ Շերարդը տեսավ, թե ինչպես Արևի առաջին ճառագայթները դիպան բլրակին: Երբ նրա աչքերը կարգի ընկան լույսի հանկարծակի հորդումից, նա նկատեց, որ փայտի կտորը արդեն սևանում է, ածխանալով: Եթե մթնոլորտ լիներ այստեղ, փայտը անմիջապես կբռնկվեր պայծառ բոցով:

Ահա թե ինչ է նշանակում արևածագը Իկարի վրա. . .

Ճիշտ է, հինգ շաբաթ առաջ, երբ նրանք կտրեցին անցան Վեներայի ուղեծիրն ու, առաջինը լինելով, վայրէջք կատարեցին աստերոիդի վրա, այնքան էլ շոգ չէր: «Պրոմեթևսը» Իկարին մոտեցավ Արևից ունեցած նրա առավելագույն հեռավորության ժամանակ: Տիեզերանավը իր ընթացքը հարմարեցրեց այդ փոքրիկ աշխարհի արագությանը և թեթև, ինչպես ձյան փաթիլը, պառկեց նրա մակերեսին: (Ձյան փաթիլ՝ Իկարի վրա. . . համա՜ թե համեմատություն է): Իսկույն փշոտ նիկելային երկաթի տասնհինգ քառակուսի մղոնանոց տարածությունով մեկ (որով պատված է աստերոիդի մեծ մասը) ցրվեցին գիտնականները: Նրանք հարմարեցնում էին սարքավորումները, ստեղծում էին տրինանգուլյացիոն ցանց, նմուշներ էին հավաքում, բազմաթիվ դիտարկումներ կատարում:

Ամեն ինչ մտածված ու մանրամասն մշակված էր շատ տարիներ առաջ, երբ դեռ նորնոր նախապատրաստվում էին Միջազգային աստրոֆիզիկական տասնամյակին: Իկարը մի անկրկնելի հնարավորություն էր ընձեռնում հետազոտող տիեզերանավերի համար. երկու մղոն հաստությամբ երկաթաքարային վահանի պաշտպանությամբ Արևին մոտենալ ընդամենը տասնյոթ մղոնի վրա: Իկարով պաշտպանված՝ նավը աներկյուղ կարող էր պտտվել հզոր հնոցի շուրջը, որը ջերմացնում է բոլոր մոլորակները և որից կախված է ամեն մի կյանք:

Առասպելական Պրոմեթևսի նման, որը կրակ ձեռք գցեց մարդկության համար, նրան անունով կոչված տիեզերահրթիռը Երկիր կհասցնի նոր գիտելիքներ երկնային զարմանահրաշ գաղտնիքների մասին. . .

Արշավախմբի անդամները հասցրեցին տեղակայել բոլոր սարքերն ու կատարել նախատեսված հետազոտությունները, մինչ «Պրոմեթևսը» կթռչեր, որպեսզի նահանջեր գիշերային ստվերի հետ: Ու բացի այդ, մի ժամ էլ դեռ մնում էր, որի ընթացքում մարդը տիեզերաքարշի մեջ (փոքրիկ, ընդամենը տասը ֆուտ երկարությամբ տիեզերանավ) մինչև արշալույսի զոլի վրա հասնելը կարող էր աշխատել գիշերային կողմում: Կարծես թե այն աշխարհում, որտեղ արշալույսը մոտենում է ընդամենը ժամում մեկ մղոն արագությամբ, ժամանակին ծլկելը դժվար չէր: Բայց Շերարդը չկարողացավ անել այդ բանը, և այժմ նրան սպասում էր պատիժը՝ մահը:

Նա հիմա էլ դեռ չէր հասկանում, թե ինչպես պատահեց այդ:

Քոլին Շերարդը կարգի էր գցում երկրաշարժագրի հաղորդիչը Կայան 145ում, որը իրար մեջ նրանք կոչում էին Էվերեստ. այն ամբողջ իննսուն ֆուտ վեր էր խոյանում Իկարի մակերևույթի վրա: Հասարակ գործ էր: Ճիշտ է, այն արվում էր տիեզերաքարշից դուրս եկող մեխանինկական ձեռքերի օգնությամբ, բայց Շերարդը արդեն հմտացել էր, մետաղե մատներով նա նույնքան վարպետորեն էր հանգույցներ կապում, որքան սեփականով: Քսան րոպե, և ռադիոերկրաշարժագիրը նորից աշխատեց, տեղեկություններ հաղորդելով եթեր՝ ցնցումների ու թափահարումների մասին, որոնց թիվը շեշտակիորեն ավելանում էր Իկարի Արևին մոտենալուն համեմատ:

Այժմ ժապավենների վրա գրանցված է նաև «իր» կորագիծը, բայց ինչ օգուտ իրեն դրանից. . .

Համոզվելով, որ հաղորդիչը գործում է, Շերարդը արևային արտացոլիչներ շարեց շուրջը: Դժվար է հավատալ, որ մետաղե ֆոլգայի երկու դյուրաբեկ, թղթից ոչ հաստ, թերթիկներ կարող էին առնել ճառագայթների հեղեղի առաջը, որոնք ի վիճակի էին մի քանի վայրկյանում հալելու անագը կամ կապարը: Եվ, սակայն, առաջին էկրանը անդրադարձնում էր նրա մակերեսին ընկնող լույսի ավելի քան իննսուն տոկոսը, իսկ երկրորդը՝ գրեթե մնացածը. նրանք միասին անց էին կացնում միանգամայն անվնաս չափով ջերմություն:

Շերարդը զեկուցեց տիեզերանավ, որ առաջադրանքը կատարված է, ստացավ «բարի» պատասխանը և պատրաստվեց վերադառնալու: «Պրոմեթևսի» հզոր լուսարձակները (առանց նրանց աստերոիդի գիշերային կողմում հազիվ թե հաջողվեր որևէ բան նշմարել) անսխալ կողմնորոշիչներ էին: Ընդամենը երկու մղոն էր բաժանում նրան տիեզերանավից, և եթե Շերարդի հագին լիներ հոդավորություն

ունեցող մոլորակային ճկուն սկաֆանդր, ինժենները պարզապես կարող էր թռչկոտելով հասնել «Պրոմեթևսին», չէ որ այստեղ անկշռելիությունը գրեթե լիակատար է։ Ոչինչ, տիեզերաքարշի փոքրիկ հրթիռաշարժիչները հինգ րոպեում նրան կհասցնեն տիեզերանավին. . .

Գիրոսկոպների օգնությամբ նա տիեզերաքարշը ուղղեց դեպի նպատակակետը, ապա միացրեց երկրորդ արագությունն ու սեղմեց ստարտերը։ Ուժեղ պայթյուն ոտքերի տակ՝ Շերարդը դուրս թռավ, հեռանալով Իկարից. . . ու տիեզերանավից։ «Անսարքությո՛ւն», — մտածեց նա սարսափով։ Նրան սեղմում էր պատին, նա ոչ մի կերպ չէր կարողանում ձեռքը հասցնել կառավարչական վահանին։ Գործում էր միայն մի մոտորը, այդ պատճառով էլ աստղագնացը թռչում էր թավալգլոր, պտտվելով ավելի ու ավելի արագ։ Շերարդը տենդագին որոնում էր կանգառի կոճակը, բայց գլխապտույտ թռիչքը բոլորովին հալից գցել էր նրան, ու երբ վերջապես ձեռքը գցեց լծակներին, նրա առաջին շարժումը էլ ավելի բարդացրեց վիճակը. նա միացրեց լրիվ արագությունը, ինչպես ջղայն մեքենավարը երբեմն արգելակի փոխարեն սեղմում է աքսելերատորը։ Ընդամենը մեկ վայրկյան տևեց սխալն ուղղելն ու մոտորը հանգցնելը, բայց այդ վայրկյանի ընթացքում պտույտներն այնքան ուժեղացան, որ աստղերը նրա աչքում դարձան լուսե անիվներ. . .

Այս ամենը պատահեց այնպիսի արագությամբ, որ Քոլին Շերարդը նույնիսկ չհասցրեց վախենալ։ Բայց հիմնականն այն էր, որ նա չհասցրեց կապվել տիեզերանավի հետ ու հաղորդել աղետի մասին։ Վերջ ի վերջո երկյուղ կրելով, որ գործը էլ ավելի կբարդանա, նա լծակները հանգիստ թողեց։ Շտոպորից դուրս գալու համար պետք էր զգուշորեն առնվազն մի երկուերեք րոպե մաններել. հաշված րոպեներ էին մնացել նրան՝ ժայռերն ավելի ու ավելի էին մոտենում. . .

Շերարդը հիշեց «Աստղագնացի հրահանգների» կազմի վրա եղած խորհուրդը. «Եթե չգիտես, ինչ պետք է անես, — ոչինչ մի անի»։ Նա հնազանդորեն շարունակեց հետևել այդ խորհրդին, երբ Իկարը փուլ եկավ նրա վրա, ու աստղերը խամրեցին. . .

. . . Պարզապես հրաշք է, որ տիեզերաքարշի պատյանը անվնաս է մնացել, ու ինքը չի շնչում տիեզերքում։ (Այժմ նա ուրախանում է, իսկ ի՞նչ կլինի կես ժամ հետո, երբ տեղի տա ջերմամեկուսացումը)։ Իհարկե, բանն առանց ջարդվածքների չվերջացավ, տեղահան են եղել ետևի երկու դիտահայելիները, որոնք ամրացված էին թափանցիկ կլոր հերմետիկ սաղավարտի վրա, հարկ կլինի վիզն այս ու այն կողմ պտտել։ Բայց դա դատարկ բան է, — ամենավատն այն է, որ բոլոր անտենաները միասին ծռմռվել են։ Նա չի կարող կապվել նավի հետ, նավն էլ նրա հետ։ Դինամիկից, միայն մի թույլ չխկչխկոց էր լսվում, որն ավելի շուտ ընդունիչի անսարքությունից էր գալիս։ Քոլին Շերարդը մարդկանցից կտրված էր։

Դրությունը հուսահատական է, բայց ոչ անհուսալի։ Ոչ, նա բոլորովին անօգնական չէ։ Թեև շարժիչները չինազանդվեցին (ըստ երևույթին, արձակման աջ խցիկում, — թեպետ կոնստրուկտորները հավատացնում էին, որ նման բան չի կարող պատահել, — փոխվել է պայթյունի ուղղությունը ու փակվել են բոցամուղները), նա կարող է շարժվել. նա ձեռքեր ունի:

Բայց թե ո՞ւր սողալ։ Շերարդը բոլորովին կորցրել էր գլուխը։ Նա վեր սլացավ «Էվերեստից», բայց արդյոք նրան հեռու է շպրտել, — հարյո՞ւր ֆուտ, հազա՞ր ֆուտ։ Ոչ մի ծանոթ կողմնորոշիչ այս փոքրիկ աշխարհում, միայն արագորեն հեռացող «Պրոմեթևսի աստղիկը» կարող է նրան փրկել։ Միայն թե աչքից չփախցնել տիեզերանավը. . . Նրա կորուստը կիմանան մի քանի րոպե հետո, եթե արդեն չեն իմացել։ Իհարկե, առանց ռադիոյի օգնության ընկերները թերևս երկար փնտրեն։ Որքան էլ փոքր է Իկարը, ճեղքերով ակոսված այս տասնհինգ քառակուսի մղոն առանց տեր ու տիրական հողը՝ հուսալի գաղտնարան է տասը ֆուտ երկարությամբ գլանի համար։ Որոնումները կարող են տևել ե՛ կես ժամ, և՛ մեկ ժամ։ Այդ ամբողջ ժամանակամիջոցում նա պետք է հետևի, որպեսզի մարդասպանը՝ արևածագը վրա չհասնի:

Շերարդը մատները մտցրեց մեխանիկական վերջավորությունների սնամեջ լծակների մեջ։ Իսկույն դրսում, տիեզերական դաժան միջավայրում կենդանացան նրա արհեստական ձեռքերը։ Ահա նրանք իջան, կռթնեցին աստերոիդի երկաթյա կեղևին, տեղից բարձրացրին տիեզերաքարշը. . . Շերարդը ծալեց «ձեռքերը», և կապսուլան, ինչպես մի արտասովոր երկոտնյա միջատ, առաջ սողաց։ Աջը, ձախը, աջը, ձախը. . .

Դա շատ հասարակ ստացվեց, քան ինքն էր սպասում, ու Շերարդը իրեն ավելի վստահ զգաց։ Իհարկե, մեխանիկական ձեռքերը ստեղծված են նուրբ ու ճշգրիտ աշխատանքի համար, բայց անկշռելիության պայմաններում նվազագույն ճիգն իսկ բավական է տեղից կապսուլան շարժելու համար։ Իկարի ձգողականությունը կազմում էր Երկրի ձգողականության մեկ հազարերորդականը. տիեզերաքարշի հետ Շերարդը այստեղ կշռում էր մոտ մեկ ունցիա։ Շարժման մեջ մտնելով, նա հետագայում պարզապես ճախրում էր, թեթև ու արագ, ասես երազում:

Սակայն այդ թեթևությունը սպառնալիք էր պարունակում իր մեջ. . . Շերարդն այդպես արդեն անցել էր մի քանի հարյուր յարդ, նա արագությամբ հասնում էր «Պրոմեթևսի» լուսավոր կետին, բայց այստեղ նա հաջողությունից գլխապտույտ ունեցավ։ Ինչպիսի արագությամբ է մարդկային գիտակցությունը մի ծայրահեղությունից մյուսին անցնում։ Վաղո՞ւց էր, երբ նա մտածում էր, թե ինչպես դիմավորի մահը արժանապատվությամբ, իսկ այժմ արդեն նա չէր համբերում տիեզերանավ վերադառնալ մինչև ճաշ:

Ինչևիցե, հավանաբար, դժբախտությունը պատահեց այն պատճառով, որ երթևեկության այդ եղանակը շատ նոր ու անսովոր էր։ Գուցեև նրա խելքը դեռ գլուխը չէր եկել խորտակումից հետո։ Իսկապես, ինչպես և բոլոր աստղագնացները, Շերարդը հիանալի կողմնորոշվում էր տիեզերքում, սովորել էր ապրել ու աշխատել այնպիսի պայմաններում, երբ «վերևի» ու «ներքևի» մասին երկրային հասկացողությունները կորցնում են իրենց իմաստը։ Մի այնպիսի աշխարհում, ինչպիսին Իկարն է, պետք է ինքդ քեզ ներշնչես, որ ոտքերիդ «տակ» իսկական մոլորակ է, դու շարժվում ես հորիզոնական հարթության վրայով։ Բավական է, որ կորցնես այդ անմեղ ինքնախաբեությունը, և քեզ կսպառնա տիեզերական գլխապտույտը։

Եվ ահա՝ հանկարծահաս նոպան։ Հանկարծ չքացավ այն զգացումը, որ Իկարը ներքևում է, իսկ աստղերը՝ վերևում։ Տիեզերքը շրջվեց իննսուն աստիճանով։ Շերարդը, ինչպես ալպինիստը, մագլցում էր զառիթափն ի վեր։ Ու թեև բանականությունը ասում էր նրան, որ դա սուտ պատրանք է, զգացումները վճռաբար ղեմ էին գնում բանականությանը։ Հիմա ուր որ է ձգողականությունը նրան կպոկի ժայռից ու նա կսկսի վայր ընկնել, ընկնել մղոն մղոնի ետևից, մինչև ջարդուփշուր կլինի. . .

Բայց կարծեցյալ ուղղահայացը ճոճվեց, ասես բևեռը կորցրած ուղեցույցի սլաքը, և ահա քարե կամարը նրա գլխավերևում է, իսկ նա կարծես ճանճը առաստաղին։ Մի ակնթարթ՝ առաստաղը նորից պատ դարձավ, բայց այժմ աստղագնացը անարգել նրա վրայով սահում էր ցած, դեպի անդունդը. . .

Տիեզերաքարշը դադարել էր Շերարդին հնազանդվելուց. նրա ճակատի առատ քրտինքը վկայում էր, որ նա ուր որ է կկորցնի նաև ինքնատիրապետումը։ Մնացել էր միակ միջոցը։ Պինդ փակելով աչքերը, նա կծկվեց ու սկսեց ինքն իրեն ներշնչել, որ դրսում ոչինչ, ոչինչ չկա. . . Նա այնքան կենտրոնացավ այդ մտքի վրա, որ նոր ընդհարման թույլ թրխկոցը նրա գիտակցությանը հասավ ուշացումով։

Երբ Քոլին Շերարդը վերջապես որոշեց բացել աչքերը, նա տեսավ, որ տիեզերաքարշը դեմ է առել քարե սապատի։ Մեխանիկական ձեռքերը մեղմեցին ցնցումը, — բայց ի՞նչ գնով։ Չնայած կապսուլան այստեղ համարյա թե անկշռելի էր, հինգ հարյուր ֆուտ մասսան, շարժվելով ժամում մոտ չորս մղոն արագությամբ, այնպիսի իներցիա ստացավ, որը շատ դյուրաբեկ էր վերջավորությունների համար։ Նրանցից մեկը բոլորովին կոտրվեց, երկրորդը անհուսալիորեն ծռվեց։

Մի պահ նրա մեջ կատաղությունը խեղդեց հուսաբեկությունը։ Երբ տիեզերաքարշը սահում էր Իկարի անկենդան մակերեսով, նա համոզված էր, որ բանը լավ կվերջանա։ Եվ ահա՝ լիակատար կրախ վայրկենական ֆիզիկական թուլության պատճառով. . . Տիեզերքը ոչ մի զիջում չի անում մարդուն, ով մոռանում է այդ, ավելի լավ է տանը մնա։

Ինչ արած, նավի ետևից ընկնելով, նա թանկարժեք ժամանակ շահեց արևածագից, տասը րոպե, եթե ոչ ավելի։ Տասը րոպե. . . ի՞նչ կտա դա նրան. տանջալից հոգեվարքի երկարաձգում, թե՞ փրկարար ժամանակ, որը հնարավորություն կտա ընկերներին գտնելու իրեն:

Շուտով կստանա պատասխանը:

Ի դեպ, որտե՞ղ են նրանք։ Հավանաբար, որոնումներն սկսել են արդեն։ Շերարդը զննախույզ հայացքն ուղղեց նավի պայծառ աստղի կողմը, հույս ունենալով դանդաղ պտտվող երկնակամարում տեսնելու իրեն օգնության եկող տիեզերաքարշերի լույսերը։ Ավա՜ղ, ոչ ոք չկար. . .

Ուրեմն, հարկավոր էր ծանր ու թեթև անել սեփական համեստ հնարավորությունները։ Մի քանի րոպե անց «Պրոմեթևսը» կանցնի աստերոիդի այն կողմը, կանհետանան լուսարձակները, լիակատար խավար կտիրի։ Կարճ ժամանակ միայն. . . Բայց, միգուցե, նա դեռ կհասցնի թաքնվել վրա հասնող ցերեկից։ Այ, այս ժայռաբեկորը, որին դեմ առավ նա, պիտանի չի՞ լինի:

Ինչ արած, թերևս նրա ստվերում կարելի է սպասել մինչև կեսօր։ Իսկ ապա՞. . . Եթե Արևը անցնի հենց ուղղակի Շերարդի գլխի վրայով, նրան ոչինչ չի փրկի։ Բայց և կարող է պատահել, որ նա այնպիսի լայնությունում գտնվի, ուր Իկարի տարվա (որը տևում է չորս հարյուր ինը օր) այդ ժամանակ Արևը հորիզոնից չի բարձրանում։ Այդ դեպքում հույս կա, որ կարելի է դիմանալ ցերեկային մի քանի ժամ։ Այլ բանի վրա հույս չի կարելի դնել — եթե, իհարկե, ընկերները մինչև լույս չգտնեն նրան:

«Պրոմեթևսը» աշխարհի ետևն անցավ, և իսկույն աստղերը փայլատակեցին ավելի ուժեղ։ Բայց ամենից պայծառ, այնպիսի գեղեցկությամբ, որ նրան նայելիս հիանում էիր, փայլում էր Երկիրը։ Ահա և Լուսինը նրա կողքին։ Երկրի վրա է ծնվել Շերարդը, քանիցս եղել է Լուսնի վրա՝ բախտ կունենա՞ արդյոք երբևէ վերստին լինել այնտեղ. . .

Տարօրինակ է, որ մինչ այդ պահը նա չէր մտածում կնոջ և երեխաների մասին, այն ամենի մասին, ինչ թանկ էր նրան այժմ արդեն այդքան հեռու երկրային կյանքում։ Նույնիսկ մի քիչ էլ ամոթ է։ Այնուամենայնիվ, մեղանչելու զգացումը իսկույն անցավ։ Չէ որ, չնայած հարյուր միլիոնավոր տիեզերական մղոններին, որոնք բաժանում են նրան իր ընտանիքից, սերը չի թուլացել, պարզապես, այժմ դրա ժամանակը չէր։ Նա պրիմիտիվ էակ է դարձել, ու ամբողջովին տարվել է գոյության կռվով։ Այդ մենամարտում ուղեղը նրա միակ զենքն էր, սիրտը կարող էր միայն խանգարել, մթագնել գիտակցությունը, սասանել վճռականությունը:

Այն, ինչ Շերարդը տեսավ հաջորդ պահին, վերջնականապես մոռացնել տվեց հեռավոր տունն ու տեղը։ Նրա ետևում, հորիզոնի վրա, ասես աստղերը կաթնավուն

մշուշով իր շուրջը քարշ տալով, հայտնվեց տեսիլային լույսի կոնը՝ Արևի մունետիկը, նրա գեղասքանչ մարգարտե թագը, որը Երկրի վրա տեսանելի է միայն Արևի լրիվ խավարման ժամանակ: Այժմ արդեն բոլորովին մոտ է այն րոպեն, երբ Արևը իր ցասումով կխոցի այս փոքրիկ աշխարհը:

Նախազգուշացումը շատ տեղին էր: Այժմ Շերարդը կարող էր բավականին ստույգ որոշել, թե որ կետում կերևա Արևը. և աստղագնացը դանդաղ, անդյուրաշարժ քարշ տալով մետաղյա ձեռքերի բեկորները, սողաց այնտեղ, որտեղ ժայռաբեկորը ամենաշատ ստվերն էր գցում: Նա հենց նոր էր թաքնվել, երբ Արևը գազանի նման վրա պրծավ ժայռին, շրջապատում ամեն ինչ կարծես պայթեց լույսով:

Շերարդը աչքերը պաշտպանելու համար շտապեց փակել դիտապատուհանը խավարչտին ֆիլտրերով: Լայնածավալ ստվերից այն դին, որ ժայռաբեկորը նետել էր աստերոիդի մակերևույթի վրա, կարծես հրաշեկ հնոց էր բացվել: Անողոք փայլը ընգծում էր շրջակա ամայության ամեն մի մանրուք: Ոչ մի կիսատոն՝ կուրացուցիչ ճերմակություն և զարհուրելի խավար: Փոսերն ու ճեղքերը հիշեցնում էին թանաքալճակներ, իսկ ելուստները կարծես բոցողեն լինեին, թեև Արևը դիպել էր ընդամենը մի րոպե առաջ:

Զարմանալի չէ, որ միլիարդավոր անգամ կրկնված ամռան խանձող տապը ժայռերից քամել է ամբողջ գազը մինչև վերջին պղպջակը՝ Իկարը վերածելով տիեզերական խանձարանի: «Ի՞նչն է մարդուն ստիպում, — ինքն իրեն հարցրեց Շերարդը, — որ այդպիսի ծախսերի ու ռիսկի գնով կտրիանցնի տիեզերական անհունները, որպեսզի ընկնի խարամի պտտվող լեռների գիրկը»: Պատասխանը նա գիտեր. այն նույնը, որը մի ժամանակ մղում էր մարդկանց հասնել բևեռները, գրոհել Էվերեստը, թափանցել Երկրի ամենախուլ անկյունները: Այդ արկածներից մարդ սկսում էր խանդավառվել ու թև առնել: Իսկ այժմ, դե եկ ուրախացիր, երբ ուր որ է կխորովվես Իկարի շամփուրի վրա. . .

Տոթի առաջին շունչը փչեց նրա դեմքին: Քարակույտը, որի մոտ ընկած էր Քոլին Շերարդը, նրան պահպանում էր ուղղակի Արևի ճառագայթներից, բայց սաղավարտի թափանցիկ պլաստիկը անց էր կացնում այն ջերմությունը, որ անդրադարձնում էին լեռները: Որքան Արևը բարձրանա, այնքան շոգ կլինի. . . Եվ ստացվում է, որ ինքը ավելի քիչ ժամանակ ունի, քան կարծում էր:

Բութ հուսաբեկությունը դուրս էր մղում երկյուղը: Շերարդը որոշեց սպասել (եթե դիմանար, իհարկե) մինչև Արևի լույսը ընկներ նրա վրա: Հենց որ տիեզերաքարշի ջերմամեկուսիչը տեղի տար Արևի առաջ՝ անցք բացել ու օդը բաց թողնել միջաստղային վակուում. . .

Իսկ առայժմ կարելի է դեռ խորհել մի քանի րոպե, մինչ ժայռաբեկորի ստվերը կհալչի լույսի ճնշման տակ։ Աստղագնացը չբռնացավ իր մտքերի վրա, լիակատար ազատություն տվեց նրանց։ Տարօրինակ է, նա այժմ կմեռնի լոկ այն պատճառով, որ քառասունական թվականներին, նրա ծնվելուց շատշատ առաջ, Պալոմարի աստղադիտարանի աշխատակիցներից ինչոր մեկը ֆոտոպլաստինկայի վրա նկատեց լուսե մի բիծ. հայտնաբերեց ու աստերոիդը դիպուկ կերպով կոչեց այն պատանու անունով, որ թռչելիս շատ էր մոտեցել Արևին. . .

Գուցեն, հենց այստեղ, բշտակալած այս հարթության վրա, երբևէ հուշարձան կկանգնեցնեն։ Հետաքրքիր է, թե ինչ կգրեն նրանք։ «Հանուն գիտության այստեղ զոհվեց ինժեներաստղագնաց Քոլին Շերարդը»: Եվ սա այն մարդու մասին է, որը այդպես էլ չհասկացավ մինչև վերջ, թե ինչի վրա էին գլուխ ջարդում գիտնականները:

Եվ, այնուամենայնիվ, նրանք իրեն էլ վարակեցին իրենց կրքով։ Շերարդը հիշեց այն դեպքը, երբ երկրաբանները, մաքրելով աստերոիդի ածխացած կեղևը, մերկացրին ու փայլեցրին նրա մակերեսը։ Ու նրանց աչքերի առջև ներկայացավ մի տարօրինակ զարդանկար, գծեր ու նրբագծիկներ, նման դեկադենտների վերացական նկարչությանը, որը մոդայի մեջ մտավ Պիկասսոյից հետո։ Սակայն դրանք իմաստավորված գծեր էին. նրանք պատկերում էին Իկարի պատմությունը, ու երկարաբանները կարողացան կարդալ այն։ Շերարդը գիտնականներից իմացավ, որ աստերոիդի երկաթից ու քարից բաղկացած այդ կունձը միշտ չէ, որ միատեսակ է ճախրել տիեզերքում։ Մի ժամանակ, շատ հեռավոր անցյալում, նա ենթարկվել է հրեշավոր ճնշման, իսկ դա լոկ մի բան կարող էր նշանակել. միլիարդավոր տարիներ առաջ Իկարը եղել է տիեզերական մի հսկայական մարմնի, թերևս Երկրի նման մի մոլորակի մասը։ Ինչինչ պատճառներով մոլորակը պայթել է։ Իկարն ու հազարավոր այլ աստերոիդներ՝ տիեզերական այդ պայթյունի բեկորներն են:

Նույնիսկ հիմա, երբ սողալով նրան էր մոտենում հուրհրացող շերտը, Շերարդը հուզմունքով էր մտածում այն մասին, թե ինչ կա այդ կործանված աշխարհի միջուկում, որի վրա, հավանաբար, գոյություն է ունեցել օրգանական կյանք։ Հետևաբար, նրա ոգին միայնակ չի ճախրի Իկարի վրա. ինչ արած, դա էլ է մխիթարանք:

Սաղավարտը մթագնեց։ Պարզ է, պաղեցումը տեղի է տալիս։ Ազնվորեն ծառայեց՝ նույնիսկ այժմ, երբ նրանից մի քանի մետրի վրա եղած քարերը հրաշեկ են դարձել, ներսում ջերմաստիճանը միանգամայն տանելի է։ Պաղեցնող հարմարանքի վերջը կլինի նաև իր վերջը:

Շերարդը ձեռքը մեկնեց կարմիր լծակին, որը Արևին պետք է զրկեր իր զոհից։ Բայց լծակը սեղմելուց առաջ, նրա մոտ ցանկություն առաջացավ մի վերջին անգամ նայելու Երկրին։ Նա զգուշությամբ ետ քաշեց ֆիլտրերը, այնպես, որպեսզի նրանք,

առաջվա պես պաշտպանելով աչքերը կուրացնող ժայռերից, չխանգարեին նայելու երկնքին:

Աստղերը նկատելիորեն գունաթափվել էին՝ ուժ չունենալով մրցելու արևապսակի փայլի հետ: Իսկ հենց ժայռաբեկորի (նրա անհուսալի պահապանի) գլխին բոցկլտում էր կարմիր լեզուն, Արևի ահեղ ցուցամատը:

Վերջին վայրկյանները անցնում էին. . .

Ահա Երկիրը, ահա Լուսինը. . . Մնաք բարո՛վ. . . Մնաք բարո՛վ, բարեկամներ ու հարազատներ:

Արևի ճառագայթները լիզեցին տիեզերաքարշի ծայրը, և կրակի առաջին հպումը Շերարդին ստիպեց ակամա ոտքերը իրեն քաշել: Անհեթեթ ու անօգուտ շարժում:

Բայց ի՞նչ է սա: Երկնքում նրա գլխավերևում բռնկվեց մի պայծառ լույս, խավարեցնելով աստղերը: Հսկայական բարձրության վրա, անդրադարձնելով արեգակնային ճառագայթները, սավառնում էր մի վիթխարի հայելի: Հիմար բան է, չի կարող պատահել: Զգայախաբեություն է, ուրիշ ոչինչ: Պետք է վերջացնել: Նա քրտնքի մեջ կորել էր, մի քանի վայրկյան հետո տիեզերաքարշը հնոց կդառնա, այլևս սպասելը անհնար է:

Լարելով վերջին ուժերը, Շերարդը սեղմեց վթարային դռնակի լծակը, պատրաստվելով դիմավորել մահը:

Լծակը չենթարկվեց: Աստղագնացը նորից ու նորից սեղմում էր բռնակը, բայց նա պինդ լռվել էր: Իսկ նա հույս ուներ, որ հեշտ մահ կգտնի, վայրկենական ողորմած վախճան. . .

Հանկարծ, գիտակցելով իր իր վիճակի ողջ զարհուրելիությունը, Քոլին Շերարդը կորցրեց ինքնատիրապետումը և բոռաց թակարդն ընկած գազանի պես:

Լսելով նավապետ Մըքելանի մեղմ, բայց միանգամայն հստակ ձայնը, Շերարդը իսկույն մտածեց, որ դա նոր զգայախաբեություն է: Եվ, այնուամենայնիվ, կարգապահության զգացումն ու վերջին ճիգերը ստիպեցին նրան հավաքել իրեն, ատամները սեղմած՝ աստղագնացը լսում էր ծանոթ խիստ ձայնը:

— Շերարդ, դիմացե՛ք: Մենք ձեր տեղը գտել ենք, միայն շարունակեք բղավել:

— Լսում եմ, — գոռաց նա: — Ի սեր աստծո, շտապեցեք, այրվում եմ:

Գիտակցությունը դեռ լիովին չէր լքել նրան, և նա հասկացավ, թե ինչ է տեղի ունեցել։ Ջարդոտված անտենայի մնացուկները եթեր էին արձակում թույլ ազդանշաններ, և փրկարարները լսեցին նրա բղավոցը։ Իսկ քանի որ նա լսում է նրանց, ուրեմն, նրանք, շատ մոտ են։ Այդ միտքը ուժ տվեց նրան:

Քոլին Շերարդը լարեց տեսողությունը. փորձելով մշուշոտ պլաստիկի միջով ուշադրությամբ զննել երկնքում երևացող տարօրինակ հայելին։ Ահա թե ինչ։ Եվ նա գլխի ընկավ, որ նրան թյուրիմացության մեջ է գցել հեռապատկերի խաբկանքը տիեզերքում։ Հայելին հսկայական չէր և չէր սավառնում մեծ բարձրության վրա։ Այն կախված էր հենց ուղիղ նրա գլխավերևում և արագորեն իջնում էր:

Նա դեռ շարունակում էր բղավել, երբ հայելին փակեց ծագող Արևի դեմքը ու մի օրհնված շվաք գցեց նրա վրա։ Ասես մի սառնաշունչ քամի փչեց նրա դեմքին։ Մոտիկից Շերարդը անմիջապես նկատեց, որ հայելու դերը կատարում էր փայլաթիթեղյա մեծ ջերմաէկրանը, որ շտապով հանել էին ինչոր սարքավորումից։ Էկրանի ստվերը ընկերներին հնարավորություն էր տվել փնտրելու նրան, չվախենալով մահաբեր ճառագայթներից:

Մի զույգ ձեռքերով էկրանը բռնած՝ ժայռաբեկորի վրա ճախրում էր երկտեղանոց տիեզերաքարշը. երկու ձեռքեր մեկնվեցին դեպի Շերարդը։ Ու թեև տապից նրա աչքերը դեռ մթագնած էին, աստղագնացը նշմարեց նավապետ Մըքլելանի ներքև ուղղված անհանգիստ հայացքը:

Այսպես Քոլին Շերարդը իմացավ, թե ինչ կնշանակի աշխարհ գալ։ Չէ որ նա գրեթե նորից էր ծնվում։ Տանջված ու հալից ընկած, նա երախտագիտության զգացում անգամ չուներ (այն կզգար ավելի ուշ), — սակայն իր շիկացած մահճից պոկվելով, աստղագնացը աչքերով որոնում էր Երկրի պայծառ կլորը:

— Ես այստեղ եմ, — հազիվ լսելի ձայնով ասաց նա։ — Ես վերադառնում եմ:

Նա վերադառնում էր՝ կանխապես վայելելով երկրային բոլոր հրաշալիքները, որոնք նա համարում էր մեկընդմիշտ կորսված։ Ասենք, չէ, ոչ բոլոր հրաշալիքները:

Ամառն նրան այլևս չի ուրախացնի: